

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵՋՄԱՆ ՊՐԾՈՐԸ՝
ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

Թրքական լրատուամիջոցներ հաղորդեցին, թե Իսթանբուլի Սկիստար շրջանին մեջ գտնուող Սուրբ Կարապետ եկեղեցւոյ գերեզմանատունը պղծած մարդը կալանաւորուած է: Ան վնասած էր հինգ գերեզման եւ յուշադրիւր: Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը դատաւարտած էր անյայտ մարդուն արարքը, իսկ ոստիկանութիւնը քանի մը ժամուան ընթացքին ձերբակալած էր ենթադրեալ յանցագործը:

ՀԱՆԴԱՐՏՈՒԹԵԱՆ
ՆՇՈՅԼ ՑԱՐԴ
ԶԿԱՅ

Ճիշդ է, որ քանի մը օր առաջ Հոռմի մէջ տեղի ունեցած լիբանանեան-իսրայէլեան բանակցութիւնները առաջնորդած են հարաւի որոշ շրջաններէն իսրայէլեան նահանջին վերաբերող համաձայնութեան, սակայն գետնի վրայ տակաւին չկան գործնական քայլեր: Տեղական լրատուամիջոցներ հաղորդեցին, որ Իսրայէլ կը խուսափի յստակ ժամկետ մը ճշդելէ իր նահանջին համար, թէեւ ամերիկացիները սկսած են այս հարցով աջակցիլ լիբանանեան դիրքորոշումին: Հարաւի մէջ թէեւ նուազած են իսրայէլեան գործողութիւնները, այսուհանդերձ յաճախ պայթումներ կը կատարուին բռնագրաւեալ գօտիին մէջ: Ազգային լրատու գործակալութիւնը երեկ հաղորդեց, որ իսրայէլեան բանակը Պընջ ժպէլ քաղաքին մէջ պայթեցուցած է Մըհտիի վարժարաններուն համալիրը:

ԵՐՈՊԱՅԻ ԽԱՂԱՂԱՊԱՅՆԵՐ

Գերմանիոյ արտաքին գործերու նախարարը առաջարկեց եւրոպական զինուած ուժերէն կազմուած զօրախումբ մը ուղարկել Լիբանան՝ փոխարինելու համար ԵՈՒՆԻՖԻԼ-ի



խաղաղապահները, որոնց ծառայութիւնը պիտի եզրափակուի տարեվերջին: «Մենք կրնանք երաշխաւորել կայունութիւնը, որպէսզի ԵՈՒՆԻՖԻԼ-ի մեկնումէն ետք լարուածութիւն չյառաջանայ Հարաւային Լիբանանի մէջ», յայտնեց նախարարութիւնը:

ԿԼԻՄԱՅԻՆ
ՊԱՏՃԱՌՈՎ ԱԻԵԼԻ
ԿԱՐՃ ՔՈՒՆ

Կլիմայի փոփոխութիւնը իր ժխտական ազդեցութիւնը կը ձգէ ոչ միայն անատուններուն եւ երկրագործական ոլորտին վրայ, այլեւ գնահատած ձեւերով սկսած է վնասել նաեւ մարդ արարծին: Ամերիկեան «Climate Central» կլիմայական կազմակերպութեան մասնագետները եզրակացուցին, որ 2020-2025 թուականներուն գիշերային ջերմաստիճանի բարձրացումը կը վնասէ մարդու ջրանի որակին: Ըստ հետազօրողներուն, մարդիկ միջին հաշուով սկսած են տարեկան 56 ժամ պակաս քնանալ, բաղդատած անցեալին հետ, երբ կլիմայի փոփոխութիւնը տակաւին այդքան լուրջ խնդիր չէր համարուեր:



Այլ հարցով, ի տես ամառնային եղանակին կրկնուող ջրային արկածներու բազմութեան, մասնագետները եզրակացուցին, թէ լողազգեստին գոյնը կրնայ կարեւոր դեր խաղալ խեղդուող մարդու փրկութեան առումով: Վիճակագրական տուեալները կը պարզեն, որ լողալու տարրական հմտութիւններուն տիրապետելու կողքին աւելի ճիշդ է ունենալ այնպիսի լողազգեստ, որ աւելի դիւրին կը նկատուի ծովափէն, եթէ լողորդը ենթարկուի վտանգի: Անոնց համաձայն, աւելի ճիշդ է ունենալ վառ գոյնի լողազգեստներ, խուսափելով մանաւանդ կապոյտ, սեւ ու մոխրագոյն լողազգեստներէն, որոնք կը միախառնուին ջուրի գոյնին հետ եւ խեղդուող լողորդը կը թաքցնեն փրկարարներուն ուշադրութենէն:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՎ
ՌՈՒՍ-ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ շնորհակալութիւն յայտնեց իր ամերիկացի պաշտօնակից Տոնըլտ Թրամփին՝ Հայ-ատրպէյճանական խաղաղ հոլովոյթը յառաջ մղելու ուղղութեամբ ներդրած ջանքերուն համար: Շուշիի մէջ համագումարի մը իր մասնակցութեան ծիրին մէջ, Ալիեւ X-ի իր եջին վրայ գրեց, որ Թրամփին դերը անգնահատելի եղած է Երեւանի հետ Պաքուի կապերը բնականոնացնելու եւ տարածաշրջանային կայունութիւն հաստատելու ջանքերուն առնչութեամբ:

Ատրպէյճանէն Հայաստան գնահատան Լիւթերու փոխադրութեան ծիրին մէջ, վերջերս Հայաստան փոխադրուած է շինարարական նպատակներու յատկացուած փաստթղթէ կտոր՝ վառելանիւթի եւ սննդանիւթեր մատակարարումներէն որոշ ժամանակ ետք: 2026-ի Յունուար-Յունիս ամիսներուն ընթացքին Ատրպէյճանի իշխանութիւնները Հայաստան արտահանած են 17 միլիոն 129 հազար տոլարի, իսկ Հայաստանէն Ատրպէյճան փոխադրութիւն չէ եղած:

Իսկ արտաքին գործերու նախարար Ճէյիւն Պայրամով հայ-ատրպէյճանական թղթածրարը, տարածաշրջանի հարցերն ու երկկողմանի կապերը արծարծեց իր ռուս պաշտօնակից Սերկէյ Լաւրովի հետ: «Հայաստանի հետ վերջին շրջանին եղած պատմական հոլովոյթները» ներառեալ խաղաղութեան համաձայնագրի նախաստորագրումը, մեր տարածաշրջանին մէջ ստեղծած են երկարաժամկետ խաղաղութեան հնարաւորութիւն», ըսաւ Պայրամով՝ աւելցնելով, որ Հայաստանի հետ խաղաղութիւնը այսօր գործնականօրէն դարձած է իրականութիւն:

ՆԵՐՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

ՄԱԿ-ի հրապարակած զեկոյցներէն մէկուն մէջ նշուեցաւ, որ Հայաստանի մէջ օտարերկրեայ ներդրումներուն ծաւալը 2024-ին հասած է 7 միլիար 639 միլիոն տոլարի, մինչ տարի



մը առաջ 7 միլիար 513 միլիոն էր: Նշենք, որ 2000 թուականին Հայաստանի մէջ կուտակուած էր ընդամենը 513 միլիոն տոլարի օտարերկրեայ ներդրում, իսկ 2010-ին՝ 4 միլիար 405 միլիոն տոլար:

«3+3» ԶԵՆԱԶԱՓՈՎ ՀԱՆԴԻՊՄԱՆ
ԳԱՂԱՓԱՐ

Ռուսաստանը կ'ակնկալէ, որ «3+3» տարածաշրջանային

ԾԱՆՐ ՀԱՐՈՒԱԾՆԵՐ ՀՈՐՄՈՒԶԻՆ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԸ

Ամերիկեան բանակը կը շարունակէ հարուածել Իրանի հարաւային շրջանները՝ ներառեալ Պաստար Ապպասի տարածքը, Հորմուզի նեղուցին ներծակայ գաւառներն ու կղզիները: Իրանի առողջապահութեան նախարարութեան համաձայն, 22 Յունիսէն ետք բազմացած յարձակումներուն հետեւանքով ցարդ մահացած է առնուազն 38 մարդ, իսկ վիրաւորներուն թիւը կը հաստէ չորս հարիւրը: Ըստ Իրանի լրատու գործակալութեան, վերջին ժամերուն կործանուած է վեց կամուրջ: Ամերիկեան կողմը շեշտեց, թէ տասնեակներով կէտեր հարուածած է՝ տկարացնելու համար Իրանի ռազմական կարողութիւնները:



Իրանի յեղափոխական պահակազոււնդը միւս կողմէ յայտարարեց, թէ ամերիկեան խաբիսիսներ թիրախաւորած է Զուլեյթի, Զաթարի, Պահլէյի եւ Յորդանանի մէջ, կործանելով ռազմական օդանւար, անօդաչու սարքեր եւ հրամանատարական կէտեր, աւելցնելով որ հրթիռարձակումները պիտի շարունակուին մինչեւ Իրանի հարաւային շրջաններուն վրայ ամերիկեան յարձակումին դադրեցումը: Անօդաչու սարքերով յարձակումի ենթարկուեցան նաեւ Իրաքի հիւսիսային Զիրտիստան գաւառին մէջ գործող եւ

խորհրդակցական ձեւաչափով նախարարական հերթական հանդիպումը՝ վեց երկիրներու մասնակցութեամբ, տեղի պիտի ունենայ մօտ ապագային. Մոսկուայի մէջ իր ատրպէյճանցի պաշտօնակիցին հետ հանդիպման ընթացքին յայտնած է արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրով:

«Կ'ակնկալենք, որ մօտ ժամանակներս մեր ատրպէյճանցի եւ հայ գործընկերները կը համաձայնեցնեն նախարարական յաջորդ հանդիպման ժամանակացոյցը, եւ մենք կ'որոշենք, թէ այն ուր տեղի կ'ունենայ» Պաքուի, թէ Երեւանի մէջ», - ըսած է Լաւրով:



Ռուսաստանի արտաքին գործերու նախարարը նշած է, որ «3+3» հարթակը (Ռուսաստան, Ատրպէյճան, Հայաստան, Իրան, Թուրքիա, Վրաստան) զգալի ներուժ ունի տարածաշրջանային մարտահրաւերները տարածաշրջանի երկիրներու ուժերով լուծելու համար՝ առանց արտաքին ապակառուցողական միջամտութեան:

ՄՈՒՏԵՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԵՐՈՒՆ ՀԱՐՅՈՎ
ԶՐՈՅՑ

Հայաստան-Եւրոմիութիւն մուտքի արտօնագրերու ազատականացումին նուիրուած երկխօսութեան ծիրին մէջ, Հայաստանի Ազգային անվտանգութեան ծառայութեան եւ շարք մը նախարարութիւններու ներկայացուցիչներ տեսակցած են եւրոպացի պաշտօնատարներու հետ: Զրուցակիցները խօսած են այս հոլովոյթը աւելի եւս արագացնելու միջոցներուն մասին:

ՔՈԶԱՐԵԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆ
ՊԻՏԻ ԶՂԱՌԱՅ

Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն մասնակցած եւ երրորդ դիրքը գրաւած՝ ընդդիմադիր «Հայաստան» դաշինքը որոշած է չիրաժարիլ երեսփոխանական աթոռներէն, թէեւ այդ մասին շշուկներ տարածուած էին ընտրութեան նախորդած եւ յաջորդած փուլին, մանաւանդ «Քաղաքացիական պամանագիր» կուսակցութեան ընտրական յաղթանակէն ետք: 9-րդ գումարումի նորընտիր Ազգային ժողովին մէջ նշեալ դաշինքը պիտի ունենայ 12 երեսփոխան: Դաշինքի ղեկավար Ռոպերթ Քոչարեան յայտնեց, որ պիտի հրաժարի երեսփոխանի աթոռէն, ուստի այդ պիտի վստահուի դաշինքի ցուցակին մէջ 13-րդ դիրքը գրաւած թեկնածուին:



Հարուածներու փոխանակումին զուգահեռ, ամերիկեան Սպիտակ տունը անգամ մը եւս յայտարարեց, որ Թեհրանի իշխանութիւնները Ուաշինկթընի յայտնած են ռազմական գործողութիւնները դադրեցնելու վերաբերեալ համաձայնագիր մշակելու մտադրութեան մասին, աւելցնելով որ երկկողմանի շփումները չեն դադրած, հակառակ ռազմական գործողութիւններուն: Նշենք, որ անցնող չորս ամիսներուն Միացեալ Նահանգներու Սպիտակ տունը եւ անձամբ նախագահ Տոնըլտ Թրամփ գրեթէ շաբաթական դրութեամբ կատարած են նմանօրինակ յայտարարութիւններ, որոնց ծանրակշիռ մասը անհիմն դուրս եկած է:

ԱԶԳԸ ԿԸ ԿՈՐԾԱՆԵՆ ՈՉ ԹԷ ԹԵՆԱՄԻՆԵՐԸ, ԱՅԼ ՍԵՓԱԿԱՆ ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Ազգերը սովորաբար չեն կործանիր այն պահուն, երբ առաջին թշնամին կ'անցնի սահմանը: Այդ ատեն կործանումը յաճախ արդեն շատոնց սկսած կ'ըլլայ: Անկկա կը սկսի շատ անելի կանուխ՝ այն պահուն, երբ հասարակությունը կը կորսնցնէ ինքզինք քննադատելու ունակությունը եւ կը սկսի անձնական ցանկությունները կոչել ճշմարտություն, իսկ անձնական շահերը՝ արդարություն: Իսկ ալ անելի ճգնաժամային ու քաոսային կ'ըլլայ կործանումը, երբ ներհասարակական տարբեր խումբեր տարբեր արժեքներ կը դաւանին եւ զանոնք միաւորող միակ երեւոյթը համակարգուած փոխադարձ ատելությունն է:

Ինչպէս մարդկութեան պատմութեան, այնպէս ալ ամէն ազգի ու հասարակութեան մեծագոյն ողբերգությունները ծնունդ առած են ոչ թէ չարիքի բացայայտ պաշտամունքէն, այլ բարիի անուսով գործուող չարիքներէն: Ոչ մէկ պատերազմ սկսած է «մենք կ'ուզենք թալանել» կամ «մենք կ'ուզենք կործանիլ» կարգախօսով: Ոչ մէկ բռնապետ երբեւէ յայտարարած է, թէ իշխանութեան եկած է մարդոց ազատությունը խլելու համար: Ոչ մէկ գաղափարախօսություն ինքզինք երբեք չար չէ անուանած: Ընդհակառակը՝ բոլորը խօսած են ազատութեան, արդարութեան, անվտանգութեան, հաւատքի, հայրենիքի, ժողովրդի փրկութեան կամ պատմական առաքելութեան անունով: Այնպէս ինչպէս հիմա եւ հոս:



Նոյնիքն այստեղ կը սկսի բանականութեան մեծագոյն ողբերգությունը:

Մարդը միակ կենդանին է, որ կրնայ բարոյական հիմնաւորում ստեղծել իր ազատութեան, վրէժի, վախի կամ իշխանասիրութեան համար: Կենդանին կը սպաննէ, որովհետեւ անօթի է: Մարդը կը սպաննէ եւ յետոյ հազար էջնոց աշխատություն կը գրէ, թէ ինչու այդ մէկը պատմական անհրաժեշտություն էր, կամ ինչու պետք էր հայրենիքէն կտոր մը եւս կորսնցնել:

Երիւս Ֆրոմ կը կարծէր, թէ մարդկային ինքնակործանման հիմնական պատճառը ոչ այնքան բնագոյային կործանարար վարքագիծն է, որքան մարդու ներքին անգորությունը: Ըստ անոր, ամէնէն վտանգաւոր մարդը ոչ թէ ուժեղն է, այլ ան, որ կորսնցուցած է ստեղծագործելու կարողությունը եւ իր գոյութեան իմաստը կը փորձէ գտնել ուրիշներու ոչնչացման մէջ: Այդպիսի մարդը կը սկսի ատել ոչ միայն իր հակառակորդը, այլ Նոյնիսկ իր համախոհը, թէ վերջինս համարձակի հարցումներ տալու:

Չոգեբանական այս մեքանիզմը միայն անհատներուն չի վերաբերիր: Ան կը գործէ նաեւ ամբողջ հասարակություններու եւ ազգերու մակարդակով: Ազգ մը կը սկսի հիւանդանալ, երբ քննադատությունը դաւաճանութեան հետ կը շփոթէ, երբ իր սխալները ընդունելու փոխարէն կը սկսի զանոնք արդարացնել, երբ իրականությունը տեղի կու տայ ինքնասիրահարած առասպելներուն, եւ երբ ճշմարտութեան որոնումը կը փոխարինուի սխալները շրջելու կամ աղաւաղելու հաւաքական փորձերով:

Բայց հաւաքական ինքնահիացումը հայրենասիրությունն չէ: Հայրենասիրությունը սեփական ժողովուրդը անելի լաւը դարձնելու ձգտումն է: Հաւաքական ինքնահիացումը, ընդհակառակը, սեփական ժողովուրդը անսխալական հռչակելու մոլորությունն է: Իսկ այդ մոլորությունը անխուսափելիօրէն գայն կ'առաջնորդէ դէպի կործանում:

Այն հասարակությունը, որ մշտապէս կը խօսի միայն իր փառքին մասին, ուշ կամ կանուխ կը կորսնցնէ իր ապագան, որովհետեւ կը դադրի սեփական թերությունները տեսնելէ: Իսկ այն հասարակությունը, որ ունի կարողությունը ցաւով ճշմարտություններ ընդունելու, փոխելու հնարաւորություն ձեռք կը բերէ: Հանձնա կրենդոտ ցոյց կու տայ, որ չարիքը միշտ չէ, որ սատանայական դէմք ունի: Երբեմն ան սովորական մարդն է, որ պարզապէս դադրած է մտածելէ: Երբ

ԱՐԱՅԻԿ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ

մարդը պատասխանատուութիւնը կը փոխանցէ առաջնորդին, կուսակցութեան, կրօնական հեղինակութեան կամ ամբոխին, անոր խիղճը աստիճանաբար կը լռէ: Այդ պահէն կը սկսի ամէնէն վտանգաւոր գործընթացը՝ մարդը կը դադրի որոշումներ կայացնելէ եւ կը սկսի միայն ենթարկուելու: Բայց ենթարկուիլը ոչ մէկ պարագայի պատասխանատուութիւնը կը վերացնէ: Մարդը կրնայ փոխել միայն այն հասարակությունը, որուն համար ինք պատրաստ է պատասխանատուութիւն կրելու: Ժամանակակից հասարակություններու գլխաւոր ճգնաժամը յաճախ ոչ թէ միայն գաղափարներու բացակայութիւնն է, այլ պատասխանատուութեան բացակայութիւնը: Բոլորը կը պահանջեն, որ բան մը փոխուի՝ պետությունը, իշխանությունը, ընդդիմությունը, եկեղեցին, դպրոցը, երիտասարդությունը, ջափահասները: Զիչերն են որ հարց կու տան, թէ իրենք ինչ պիտի փոխեն:

Ասիկա ազատութենէն փախուստի ամէնէն նուրբ ձեւերէն մէկն է. բոլորը սրիկայ հռչակել եւ մէկ կողմ քաշուիլ: Բայց ազատ մարդը միշտ պատասխանատու է, մինչ անազատ մարդը միշտ մեղաւորներ կը փնտռէ: Ֆրանսացի մտածող Ռընէ Ժիրար ցոյց կու տայ, որ հասարակությունները յաճախ կը փորձեն իրենց ներքին հակասությունները լուծել՝ «քաւութեան խիսազ» մը ստեղծելով: Երբ տագնապ մը կը ծագի, հասարակությունը կը սկսի փնտռել այն անհատը կամ խումբը, որուն վրայ կարելի ըլլայ բեռնցնել բոլոր դժբախտություններուն պատասխանատուութիւնը: Ահա այսպէս կը ծին «ներքին թշնամիները», «դաւաճաններու» անվերջ ցուցակները, քաղաքական եւ գաղափարական փոկորսությունները, Նախկինները, Ներկաները, ռուսի ու թուրքի ստրուկները եւ այլն:

Բայց եւ այսպէս խնդիրները չեն անհետանար: Նոր «քաւութեան խիսազ» մը չի բուժեր ազգը: Ընդհակառակը, անելի կը կարծրացնէ, անելի կը վախցնէ, անելի կոյր եւ մոլեգին կը դարձնէ զայն: Ազգը կը սկսի ապաքինիլ միայն այն ատեն, երբ կը համարձակի Նայելու իր իսկ հայելիին: Իսկ այդ հայելին միայն գեղեցկություն կամ ինքնահաճոյք ցոյց չի տար: Ան Նախ եւ առաջ իրականությունը կը ցուցնէ:



Մարդկային բանականությունը ստեղծած է գիտություն, արուեստ, պետություն, իրաւունք եւ քաղաքակրթություն: Բայց Նոյն բանականությունը ստեղծած է նաեւ այնպիսի երեւոյթներ, ինչպէս գաղափարախօսական մոլուցքը, զանգուածային ատելությունը, ցեղասպանությունները եւ ամբողջ ժողովուրդներու ինքնախաբէությունը: Հետեւաբար, հասարակութեան առջեւ կանգնած գլխաւոր խնդիրը Նոր գաղափարախօսութիւն ստեղծելը չէ: Գլխաւոր խնդիրը սեփական գաղափարախօսութեան վրայ կասկածելու կարողությունն է: Ժողովուրդները սովորաբար չեն կործանիր, որովհետեւ իսկացի չեն, այլ որովհետեւ իրենց բանականությունը կը դադրի ծառայել ճշմարտութեան եւ կը սկսի ծառայել ինքնարդարացման: Այդ պահէն սկսեալ մարդը այլեւս ճշմարտութիւն չի որոնէր: Ան կ'որոնէ/կը յօրինէ միայն այնպիսի փաստեր, որոնք կը հաստատեն այն, որուն ինք արդէն որոշած է հաւատալ: Մենք հիմա Նոյնիքն այդ վիճակը կը պարզենք: Մենք հիմա կը փորձենք արդարացնել ամէն ինչ եւ մենք գմեզ:

Եւ այդ պահուն է, որ հասարակութեան իսկական անկումը կը սկսի ո'չ ասիմաններուն վրայ, ո'չ Արցախի մէջ, այլ մեր սեփական գիտակցութեան մէջ: Ան կը սկսի այն ատեն, երբ կը դադրինք հաւատալ մենք մեզի, մեր գաղափարներուն, մեր արժեքներուն եւ մեր ուժին: Այդ պահէն սկսեալ՝ ամէն ինչ կարելի կ'ըլլայ արդարացնել:

«Տարբերակ 21»

ԱՃԻԱՐԸԻ ԱԽՈՅԱՆՈՒԹԵԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Աշխարհի ֆութպոլի ախոյանութեան կիսաեզրափակիչները արդէն պատմութեան անցան: Սպանիա՝ Ֆրանսայի, իսկ Արժանիքն՝ Անգլիոյ դէմ իրենց յաղթանակներով



ապահովեցին եզրափակիչի ուղեգիրը եւ այժմ աշխարհի ֆութպոլասէրներուն ուշադրութիւնը սեւեռած է գլխաւոր աւարտականին վրայ:

Հետաքրքրական զուգահիւսություն մըն է, որ եզրափակիչ հասած երկու երկիրներուն պաշտօնական եւ հիմնական

ՆԱԾՈ Ը.

լեզուն սպաներէնն է, բնականաբար հնչիւնաբանական չնչին տարբերություններով:

Երկու հաւաքականներուն խաղաոճերուն միջեւ եւս կարելի է նկատել որոշ ընդհանրություններ: Երկուքն ալ կը Նախընտրեն խաղը կառուցել դարպասապահէն սկսող եւ երկրպագուներուն երկիւղ պատճառող կարճ փոխանցումներով, սառնասրտօրէն դիմակայել՝ հակառակորդը ճնշելով (pressing), ապա յանկարծակի երկար փոխանցումներով վտանգ ստեղծել՝ մէկ կողմէ Լամին Եամալի, միւս կողմէ Լիոնէլ Մեսսիի ստեղծագործական կարողություններուն միջոցով: (Յատկանշական էր, որ 48 ամսակից հաւաքականներուն մէջ Արժանիքը հազուադէպ բացառութիւն էր: Անոր ամենավտանգաւոր ճեղքումները դէպի «մեծ քառակուսի» կը ծնէին կեդրոնէն, մինչ մնացեալ կազմերուն ճնշող մեծամասնությունը իրենց յարձակողական գործողությունները կը կառուցէին եզրային գօտիներէն):

Այս բոլորին լոյսին տակ, ֆութպոլասէրները իրաւաբար կրնան սպասել յարձակողական, բաց եւ դիտարժան եզրա-

Հարունակութիւնը տեսնել էջ 4

Անտեղի Կոչերով՝ Սպառնալիքներով (Ազերիներու Մոտք-Պատերաճմ)

ԻՆՉ ԿԸ ՀԵՏԱՊՆԴՈՒԻ ԵՒ ՈՐՈՒ ԶԱՂԱՑՔԻՆ ԶՈՒՐ ԿԸ ՀՈՍԵՑՈՒԻ

ՊԱՐՈՅՐ 3. ԱՂՊԱՇԵԱՆ

Հայաստան կը տառապի բարդոյթներէ՝ հոգեկան, ֆիզիքական, յարաբերական, մտածողական, արտայայտչական հիւանդագին տարատեսակ Նախանշաններով, որոնց վրան կ'աւելնան նաեւ նկարագրային, բարքային, սովորութային, պատկերային եւ յատկանշային հոգեբանական բիծեր եւ երեւոյթներ:

Այս բոլորը բնական են, սովորական, թե՛ ծննդական, դժուար է պատասխանել, որովհետեւ հայ ժողովուրդը իր կենցաղային, ընկերային եւ ազգային կեանքին մէջ, թթ Նոյնիսկ ունեցած է կամ անցած է վերոյիշեալ փուլերէն, ատոնք անցողիկ եղած են, առանց զգալի դեր մը ունենալու կամ հետք մը ձգելու, մինչեւ որ երկիրը կամ ժողովուրդը անցնի բարդ պայմաններ, դիմակալէ ցնցումներ, դեմ-յանդիման չգտնուի անհանգստացնող անակնկալներու եւ կամ իր դիմաց չպարզուին մտահոգիչ կացութիւններ:



Դժբախտաբար, ժողովուրդներու խառնիճաղանջային ու փոթորկոտ վիճակներուն մէջ, ուր ամէն ինչ կրնայ յեղաշրջեալ պատկեր մը ներկայացնել, մարդկությունը ինքզինք կը գտնէ հազարումէկ տագնապներու առջեւ, իսկ զանոնք յաղթահարելը այդքան ալ դիւրին մարտահրաւերներ չեն կրնար ըլլալ:

Հայաստանը ու հայրենի հասարակությունը, որոնք նման խայթող ու կրծող պայմաններէ նուազ անցած են, թեւէ ենթարկուած՝ յարձակողական, զաւթողական, ճնշողական ու բրտական հալածանքներու, բայց մնացած են կանգուն, կառչած ըլլալով իրենց հայրենիքին ու հողին, ինքնութեան եւ արմատներուն, լեզուին ու մշակոյթին, յատկապէս շնորհիւ իրենց ԽՈՐՀՐԴԱՅՆԱԿԱՆ հովանաւորութեան, ապահովութեան եւ անվտանգութեան նշելի գործօններուն, մասնաւորաբար ի տես այն բարգաւաճութեանց, բարերարութեանց ու բարօրութեանց, որոնցմէ զօտուիլը եւ գտնոնք վայելելը, իրապէս, բոլորին համար դարձան... երազային իրականություններ:

Իսկ այդ ժամանակաշրջանը, իր խաղաղութեամբ եւ ապահովութեամբ, անտարակոյս, դարձաւ օրինաբեր ու ճակատագրաբեր հայրենիքին ու հայ ժողովուրդին համար, քանի ատոնք էին այն պատնէշներն ու հիմքերը, որոնք պիտի կարենային գիրեք տանիլ դէպի այն ափերը, որոնք անկախութեան եւ գերիշխանութեան հոգեցունց պահէր պիտի ներշնչէին ոչ միայն հայրենի ժողովուրդին, այլեւ՝ սփիւռքահայութեան, բոլորն ալ, միասնաբար, ոգեշնչուին ու փառաբանուէին:

Եւ յանկարծ անկախութիւնը ժամանեց, թեւէ խաւարի, ցրտահարութեան, թշնառութեան եւ անօթութեան տխուր պայմաններու մէջ, սակայն հայաստանցիները, մանաւանդ անոնց գիտակից, հասկցող եւ ըմբռնող խաւերը, այդ բոլորը բնական ու ժամանակաւոր նկատեցին, այնքան ատեն որ հայրենիքը անկախացած էր եւ պետք էր ընթանար դէպի անոր իրականացումն ու հաստատումը:

Անշուշտ, դիւրին չէին օրերը, կը մնար զանոնք քաջաբար ու տղամարդաբար դիմագրաւել, առանց դառալթութեան ու թուամորթութեան, պարտաւորականութեան եւ անյուսալիութեան, սպասելով այն պայծառ օրերուն, երբ անկախութիւնը կը դառնայ յուսադրող եւ առիթնող լուսաւոր փարոս մը:

Երկիրը կը գտնուէր բազմաթիւ ու խայտաբղետ մարտահրաւերներու դիմաց, անհրաժեշտ էր այդ բոլորը հետզհետէ չեզոքացնել, ստեղծելով այն հանգստաւետ պայմաններն ու առիթները, որոնք ջաղաքացիներուն համար լոյսի եւ յոյսի հոգեկան ու ֆիզիքական լիցքեր էին ու կրնային գիրենք պահել ու պաշտպանել, խնամել ու պատսպարել, քանի «ծմրան օրերը կու գան ու կ'երթան, վիատելու չէ, (ատոնք) վերջ կ'ունենան» ի իմաստալից խօսքերով:

Դժբախտաբար, անկախութեան առաջին տարիները շատ ծանր էին, խիստ, տժգոյն ու մռայլ, թե՛ կենցաղային, թե՛ ապրելակերպային, թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ կրթական, թե՛ ստեղծագործական անբաւարարություններու առումներով, պատճառ դառնալով շատերու հեռանալ հայրենիքէն կամ լքել զայն, երբեմն ակամայօրէն, երբեմն պարտադրաբար, երբեմն ալ արկածախնդրականօրէն, սակայն մեծ զանգուած մը մնաց կառչած իր հողին եւ օճախին, հայրենիքին եւ անկախութեան, ի գին Նոյնիսկ զրկանքներու, անձկություններու, նեղություններու եւ... անիրաւութիւններու:

Սփիւռքը եւս, որ խանդավառուած եւ լիացած էր անկախութեամբ, երբեք անտարբեր ու կրաւորական դիրք չբռնեց

Հարունակութիւնը տեսնել էջ 4

«ՄԱՍԻԱ» - ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

TRIPP-Ը ԸՆԹԱՑՔԻ ՄԷՋ Է, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԻՇԻԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԱԾ

2020 թուականի 44-օրեայ պատերազմի աւարտէն ետք Ատրպէյճան կը պահանջէր, որ ռուսական կողմի միջնորդութեամբ ստորագրուած եռակողմ համաձայնութեան հիման վրայ իրեն տրուի Հայաստանի Սիւնիքի մարզով անխափան միջանցք, զայն կոչելով «Չանգեզուրի միջանցք»՝ կապելու համար իր բուն տարածքը ինքնավար Նախիջեւանին հետ: Ատրպէյճանի տեսակէտին կը սատարէր Նաեւ Մոսկուան, յայտարարելով թէ այդ միջանցքին հսկողութիւնը պէտք է վստահուի ռուսական զօրքերուն:

Երեւան առաջին օրէն կը մերժէր այդ մօտեցումը ու կը յայտարարէր, որ «Չանգեզուրի միջանցք» հասկացողութիւն գոյութիւն չունի, իսկ նման ծրագիր կարմիր գիծ է Հայաստանի համար:

Հայաստանի քաղաքական դաշտին ծանօթ շրջանակները մէկ կողմէ աղմուկ կը բարձրացնէին, որ իշխանութիւնները կը պատրաստուէին հերթական գիշումը կատարելու եւ Սիւնիքի մարզը յանձնելու Ատրպէյճանին, իսկ միւս կողմէ համաձայն էին, որ ճանապարհի հսկողութիւնը յանձնուի Ռուսաստանին: Սակայն, իշխանութիւնները մինչեւ վերջ մնացին իրենց այն պնդումին վրայ, որ պատրաստ չեն երկրին ինքնիշխանութիւնը գիշելու որեւէ երկրորդ կամ երրորդ կողմի:

Այս հարցին շուրջ վեճը շարունակուեցաւ մինչեւ 2025 թուականի Օգոստոս 8-ին Ուաշինկթընի մէջ կայացած «Խաղաղութեան Գազաթաժողովը», որուն մասնակցեցան Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփը, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը եւ Ատրպէյճանի Նախագահ Իլհամ Ալիեւը: Այդ ժողովի ընթացքին է որ Նախատրուագրուեցաւ Հայաստան-Ատրպէյճան համաձայնագիրը եւ ծնունդ առաւ «Թրամփի Միջազգային Խաղաղութեան եւ Բարգաւաճման Ճանապարհի»՝ TRIPP ծրագիրը, որ ցամաքային կապ պիտի ապահովէ դէպի Նախիջեւան, սակայն երթուղին պիտի մնայ Հայաստանի ամբողջական ինքնիշխանութեան ներքեւ եւ որեւէ ձեռով պիտի չփոխանցուի Ատրպէյճանի կամ Ռուսաստանի վերահսկողութեան: Այս ծրագիրը ունի Նաեւ տնտեսական բաղադրիչ, որուն

հիման վրայ պիտի բացուին տարածաշրջանային առեւտրական ուղիները՝ Նպաստելու համար Հայաստանի տնտեսական զարգացման, աճեցնելով առեւտուրը Հարաւային Կովկասի մէջ, ստեղծելով տարանցիկ եկամուտներ եւ ներդրումներ ու ընդլայնելով Հայաստանի մուտքը տարածաշրջանային շուկաներ: Այս նպատակով հիմնուեցաւ Հայ-Ամերիկեան համատեղ ընկերութիւն՝ ներդրումներ կատարելու եւ ծրագիրը գործադրութեան դնելու համար:

Բնականաբար կան խոչընդոտներ, որոնք կրնան դանդաղեցնել ծրագրին իրագործումը: Ռուսաստան կը մերժէ հայկական երկաթուղիները վաճառել մէկ այլ երկրի, որպէսզի երթուղիներու այդ կարելու օղակը, որ մինչեւ օրս մատնուած է անտեսումի ու անգործութեան, վերանորոգուի ու սկսի գործել ընդհանուր ծրագրի ծիրէն ներս: Իրանի Իսլամական Հանրապետութիւնը եւս ունի իր մտահոգութիւնները՝ կապուած իր սահմանին մօտ ամերիկեան ներկայութեան հետ: Երեւան կը փորձէ այս երկու հարցերը լուծել բանակցութիւններու միջոցաւ:

Ռուսաստանի հետ կապուած, օրերս Հայաստանի արտաքին գործերու փոխնախարարը յայտնեց, որ Սիւնիքի մարզով Ատրպէյճանը Նախիջեւանին կապող TRIPP-ը պիտի գործէ Եւրասիական Տնտեսական Միութեան՝ ԵԱՏՄ-ի տարանցման կանոնակարգերուն համապատասխան: Այս յայտարարութիւնը անակնկալ թուեցաւ, մանաւանդ այս փուլին, երբ ԵԱՏՄ-ի հետ Հայաստանի յարաբերութիւնները կը բոլորեն բարդ շրջան մը, իսկ TRIPP-ին մաս է Նաեւ Միացեալ Նահանգները: «Ազատութիւն Ռատիոն» այս մասին հարցում ուղարկած է Պետական Բաժանմունք, ուրկէ ստացած է շատ յստակ պատասխան. «TRIPP-ը կը պահպանէ Հայաստանի ինքնիշխանութիւնը, տարածքային ամբողջականութիւնը եւ իրաւագործութիւնը: Սահմանային անվտանգութեան եւ մաքսային բոլոր գործառնությունները կը մնան Հայաստանի վերահսկողութեան ներքոյ, Հայաստանի իշխանութիւնները կ'իրականացնեն վերահսկողութիւնը ու կը կայացնեն առանցքային որոշումները»:

Ներքին քննադատները իրենց յոյսը դրած են TRIPP-ի

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ (ԱՄՆ)

ծրագրի ծախողման վրայ ու կը շարունակեն պնդել, որ Ատրպէյճանը հասած է իր նպատակին ու ստացած է իր պահանջած «միջանցքը»: Սակայն, իրականութիւնը այն է, որ ամերիկեան մասնագիտական խումբերը հերթաբար կ'այցելեն Հայաստան Նախապատրաստական աշխատանքներ իրագործելու համար: Այդ խումբերէն վերջինը ամերիկեան ճարտարագիտական խումբի այցն էր, որ եկած էր ուղիին տեղանքը ստուգելու համար: Իսկ երկրորդ մեղադրանքի պատասխանը բազմիցս շեշտուած է հայրենի իշխանութիւններուն կողմէ ու այժմ կու գայ վերահաստատուելու ամերիկեան կողմէն:

Այսպիսով պարզ կը դառնայ, որ, հակառակ բոլոր յոռետեսական պնդումներուն, TRIPP-ի ծրագիրը ընթացքի մէջ է ու հայկական կողմը միակ որոշում կայացնողն է՝ քաղաքական ու տնտեսական հարցերուն մէջ, ու իրեն վերապահուած է երրորդ երկիրներու հետ բոլոր գործառնություններու դասաւորումը ի շահ Հայաստանի տնտեսական զարգացման ու ապագային:

ԽԱԶԲԱՌ- 88

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1) Բարձրագոյն ուսմանց կեդրոն:
2) Լիբանանի գետերէն – Բոսոր – Ցերեկ օր:
3) Ճափոնական դասական թատրոն – Շիճուկ – Պոչատ՝ մակաբոյծ միջատ:
4) Ետին դարձած՝ օտար աղջիկ:
5) Նշանակութիւն – Իգական անուն:
6) Լարուած, ձիգ – Հայ թագաւոր:
7) Քրիստոսի առաջին իրաւքը:
8) Թեմիսիւն Ֆորժէ – Սուրիական քաղաք – Մէջը պարապ՝ կառափ:
9) Զի – 5400 – Ծուռ, թեք (հակ.):
10) Մեծ թերակղզի:

ՈՒՂԱԴԱՅՅԵԱՑ

1) Դիմացը գտնուող:
2) Նահատակ գրագէտ Տիգրան Օտեան – Մէկ – Արական օտար անուն:
3) Զայնամիշ – Հերթ – Հովանոցաւոր պատշգամին ծայրամասերը:
4) Պատարագի բաժակ:
5) Արիեստաւորի ունեւեակ – Երեւանի շրջաններէն:
6) Կանաչ լուբիա – Ետին դարձած՝ տխմար:
7) Լակ, շան ուտելիք:
8) Դրկից գիրեր – Շմխաղող – Կրկնուած քաղաձայններ:
9) Կէս՝ իրաւասու (հակ.) – Եգիպտական դից – Աղամանդի ճեղք:
10) Ետին դարձած՝ գահաժառանգ:

ԽԱԶԲԱՌ- ԹԻՒ 87-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ն	Ա	Խ	Ա	Պ	Ա	Տ	Ճ	Ա	Ռ
2	Ս	Ր	Է		Ո	Տ		Մ	Ն	Ա
3	Տ	Տ		Ա	Ի	Ա	Ղ		Ի	Չ
4	Ա		Ա		Է	Կ	Տ	Ս		Մ
5	Ս	Ր	Տ	Ո	Տ		Ս	Ա	Յ	Ա
6	Ե	Ր	Ե	Ս		Ր	Ո	Կ	Ո	Մ
7	Ն		Ն	Ի	Ն	Ա		Ր		Թ
8	Ե	Մ		Ն	Ա	Ր	Տ		Ե	Ե
9	Ա	Ր	Ա		Ե	Ի		Ս	Է	Ր
10	Կ	Ա	Հ	Ա	Ի	Ո	Ր	Ա	Ն	Ք

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ- 89

Ս	Ո	Ր	Ա	Բ	Ր	Ա	Բ	Լ	Կ	Ղ	Կ	Ի	Ո	Տ	Ա	Յ	Ո	Յ	Ս
Ք	Ր	Է	Ա	Կ	Ա	Ն	Ի	Ա	Ա	Ն	Գ	Ր	Ա	Կ	Ա	Ս	Ա	Դ	Ք
Ա	Ս	Ս	Փ	Ն	Ն	Ռ	Ձ	Դ	Ր	Ա	Կ	Ա	Ն	Բ	Ո	Ս	Ո	Ր	Ն
Փ	Ո	Ա	Ի	Ի	Ա	Ա	Ն	Տ	Ե	Պ	Ա	Մ	Ր	Ք	Ա	Ղ	Հ	Ա	Ն
Ա	Բ	Կ	Ի	Բ	Ճ	Ա	Ա	Յ	Լ	Ա	Կ	Ե	Ր	Պ	Ե	Լ	Ա	Մ	Ա
Փ	Ր	Փ	Ր	Ա	Դ	Է	Չ	Ե	Ի	Ռ	Դ	Ա	Ր	Բ	Ի	Ն	Ի	Ա	Ր
Կ	Ո	Ա	Կ	Ա	Մ	Ր	Ձ	Ա	Կ	Փ	Դ	Ա	Ն	Դ	Ա	Լ	Ո	Շ	Կ
Կ	Բ	Փ	Ո	Խ	Ա	Ն	Ա	Կ	Ր	Ր	Ա	Ք	Ի	Ո	Դ	Ն	Խ	Ո	Ո
Ա	Ա	Ն	Ո	Ի	Ա	Ն	Ա	Կ	Ա	Ն	Տ	Յ	Ա	Ր	Ի	Ո	Ք	Ր	Ի
Փ	Փ	Տ	Ա	Խ	Տ	Ռ	Ա	Յ	Ա	Ր	Ա	Փ	Ո	Փ	Ո	Խ	Մ	Թ	Մ
Ա	Ո	Ք	Ա	Ի	Ա	Ր	Ա	Ն	Ա	Ձ	Ր	Ի	Ո	Խ	Ի	Ա	Փ	Ա	Ս
Ր	Ի	Խ	Ո	Ր	Ա	Մ	Ա	Ն	Կ	Ճ	Կ	Խ	Ի	Ո	Խ	Ե	Ր	Ի	Մ
Ի	Թ	Բ	Ա	Ր	Ե	Ն	Ի	Շ	Ն	Յ	Ա	Ն	Ի	Ո	Տ	Դ	Ա	Ր	Ձ
Չ	Ա	Ա	Խ	Բ	Ո	Կ	Ո	Տ	Ն	Ն	Բ	Խ	Ր	Ր	Ե	Պ	Ե	Ր	Ճ
Յ	Ձ	Գ	Ի	Ա	Ե	Գ	Ղ	Ղ	Ա	Ի	Ա	Շ	Ա	Կ	Ա	Դ	Մ	Ղ	Կ
Ա	Ա	Ի	Տ	Ն	Ե	Ր	Ձ	Կ	Ո	Ի	Ն	Տ	Ս	Դ	Լ	Ա	Ի	Ի	Ձ
Ծ	Ն	Ն	Ա	Հ	Լ	Ր	Ա	Գ	Ի	Ր	Ե	Ո	Մ	Ն	Է	Ր	Ո	Ա	Ո
Ի	Ի	Կ	Ա	Ն	Ն	Գ	Կ	Կ	Ի	Լ	Մ	Գ	Յ	Ո	Ռ	Պ	Ր	Ա	Կ
Լ	Ի	Ր	Կ	Ա	Ի	Դ	Է	Ո	Ա	Տ	Ս	Ա	Գ	Չ	Ա	Ա	Լ	Ի	Ք
Ց	Ց	Պ	Ա	Ր	Տ	Է	Չ	Կ	Ա	Ն	Ա	Չ	Ծ	Պ	Ռ	Ս	Տ	Ե	Լ

ԱԼԻՔ ԱՅԼԱԿԵՐՊԵԼ ԱՆՅՆԱՐ ԱՆՈՒԱՆԱԿԱՆ	ԴԱՆԴԱԼՈՇ ԴԱՆԴԱՂ ԴԱՍԱԿԱՐԳ ԴԱՏԱՐԿԱԲԱՆ ԴԱՐԲԻՆ ԴԱՐՉ ԴԱՐՊԱՍ ԴԵՂՉ ԴԻԱԿ ԴՐԱԿԱՆ ԴՐԱՍԱՇՈՐԹ	ԼԻՆՏ ԼՐԱԳԻՐ ԼՐԻԻ ԼՐՈՒՄ	ԿԵՆԱԿԻՑ ԿՈՓԻՆ ԿՐԿԻՆ
ԲԱԳԻՆ ԲԱԼԻՇ ԲԱՐԲԱՌԻԼ ԲԱՐԲԱՐՈՍ ԲԱՐԵՆԻՇ ԲԵՄԱՅԱՐԴԱՐ ԲՈԿՈՏՆ ԲՈՍՈՐ ԲՈՐԲՈՍ	ԶԱՆԱԿ ԶԳԱՍՏ ԶՈՒՐ	ԿԱՍՐՉԱԿ ԿԱՐԵԼԻ ԿԱՓԱՐԻՉ	ՅԱԾԻԼ ՅԱՃԱԽԱԴԵՊ ՅԱՏՈՒԿ ՅԱՐԱՓՈԹՈՒՑ ՅՈՅՍ
			ՈԳԵՀԱՐՑ ՈՒԵՐԻՄ ՈՂՈՐՄԱԾ ՈՂՉԱԿԵՉ ՈՍՆ

ԽԱՊԻՆ ՕՐԵՆՔԸ.

- Բառերը կրնան կարդացուիլ տարբեր ուղղութեամբ՝ հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղակի:
- Միեւնոյն տառը կրնայ գործածուիլ մէկէ աւելի բառերու մէջ:
- Դիւրութեան համար սկսիլ երկար բառերը գտնելով:

Պահուած բառը (6 տառով)՝ ՓԱԳԿԱՄԻՍ ՀԱՒԱԶԳԻ

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ- ԹԻՒ 88-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ԶԵՐՄԻԿ

Պահուած բառին եւ խաչբառին պատասխանները տեսնել խաղերու յաջորդ թիւով

